

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԳԻ ՓՇԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՅՈՒՅԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. ՀՀ Արմավիրի մարզի Փշատավան գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար/ծածկագիրը 1.2-1/

Աշխատակազմի քարտուղարը համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է ՏԻՄ

ռազմավարական և կազմակերպչական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը, լուծում աշխատակազմի առջև դրված գործառնություններից բխող հիմնախնդիրները, ընդունում որոշումներ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝ բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ քաղաքացիական ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ կամ առնվազն համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ վերջին հինգ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, մինչև 2015 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության, պետական կամ համայնքային կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

- Ունի պաշտոնի անձնագրի 10-րդ կետի բ. ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

- Ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

2. ՀՀ Արմավիրի մարզի Փշատավանի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիրը 3.1-2/

Առաջատար մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմայի կազմման աշխատանքներին, աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է ինքնակամ հողազավթման կանխման, կասեցման և դրանց հետևանքների վերացման աշխատանքներին, աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է սահմանված կարգով հողային հաշվեկշռի կազմման աշխատանքներին: Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ: Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝ .

- միջնակարգ կրթություն

- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի բ. ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական

ակտերի անհրաժեշտ իմացություն,

- ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարված մրցույթները կկայանան 2012 թվականի

Հունվարի 16 -ին 1.2-1 ծածկագրով թափուր պաշտոնի համար ժամը 12⁰⁰-ին, 3.1-2 ծածկագրով թափուր պաշտոնի համար ժամը 14⁰⁰-ին՝ Փշատավանի գյուղապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները Փշատավանի գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան

պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- դիմում մրցույթային հանձնաժողովի անունով / ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/

- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ միասին,

- հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005թ.—ի մարտի 3-ի N 310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

- հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

- արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենները:

- մեկ լուսանկար 3 x 4 չափսի

- անձնագրի պատճեն;

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Փշատավանի գյուղապետարան/ հեռ՝ 077 34-54—52/ , ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն/ հասցե՝ քաղ. Արմավիր , Աբովյան 71, հեռ.՝ 0237-2-07-70, -2-76-49

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10⁰⁰–ից 16⁰⁰, բացի շաբաթ և կիրակի օրերից Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 30-ը դեկտեմբերի 2011 թ.: